



Ի. ԷԼԱՐՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Պատմական հուշարձանների պահպան մաս հայկական ընկերության հերթական 2-րդ համագումարը ամփոփելով հանրապետական խորհրդի վերջին հինգ տարիների գործունեությունը նշեց, որ զգալի աշխատանք է կատարվում հուշարձանների գիտական հաշվառման, ուսումնասիրման, պրոպագանդման, նրանց պահպանման և վերականգնման ուղղությամբ:

Համագումարը միաժամանակ խնդիր դրեց հանրապետական նորընտիր խորհրդի առաջ լուրջ ուշադրություն դարձնել նաև մեր հանրապետության սահմաններից դորս գտնվող հայկական հուշարձանների պահպանման և վերականգնման վրա: Համագումարից հետո ընկերության հանրապետական խորհուրդը առաջին քայլերն է կատարել այդ ուղղությամբ: Ստեղծվել է հանրապետությունից դորս գտնվող հայկական պատմա-ճարտարապետական հուշարձանների հաշվառման և պահպանման սենյակի, որը ետանդուն աշխատանք է ծավալել այդ ուղղությամբ: Մենցիայի նախաձեռնությամբ (Ասիազա՞ն՝ պատմական գիտությունների թեկնածու Գր. Գրիգորյան) վերջին երկու տարիներին ուսումնասիրվել, լուսանկարվել և կինոնկարահանվել են Ղրիմի, Հյուսիսյին Կովկասի և մի շարք այլ հայաբնակ քաղաքների ու բնակավայրերի քազմաթիվ կոթողներ: Խճշտեն հայունի է, օտարի հայածներից ազատվելով տարբեր ժամանակներում շատ հայեր գտային են Ուկրաինա, Հյուսիսյին Կովկաս, Աստրախան, Մուկվա, Պետերբուրգ, Լեհաստան, Բուլ-

յարիա, Հոնգարիա և այլ քաղաքներ ու բնակավայրեր: Նրանք այդ վայրերում ստեղծել են տնտեսական ու մշակութային օշախներ, կառուցել են քաղմարդիվ ճարտարապետական հուշարձաններ ու կոթողներ, որոնց մի մասը մեզ է հասել:

Մուկվայի, Լեհինգրադի, Մոսկովի, Կրասնոդարի, Հյուսիսյին Կովկասի, Ուկրաինայի և այլ գաղթօջախների հայկական հուշարձանների վիճակին ծանոթանալու նպատակով ընկերության հանրապետական խորհրդի նախագահությունը այդ վայրերը գործուեց համապատասխան մասնագետներ: Նրանք իրենց ծառայությունները են մատուցել ոչ միայն հուշարձանների ուսումնամասն, բարեկարգման աշխատաքըներին, այլև ըստ հնարավորին նպաստել են դրանք մշակութային օշախների վերածելու և դրանով իսկ կործանումից մեկնադիշու փրկելու գործին:

Դարերի պատմություն ունի հայ և ուկրաինացի ժողովուրդների բարեկամությունը: Տարաբախու հայ պանդոխտը ապատան է գտնել ուկրաինական հողում: Կիևյան Ուսիսյայի հետ հայերի ունեցած հնադարյան կապերը հայունի են դեռևս վաղ անցյալից, երբ 1062 թվականին իշխան Իզյասլավի հրավերով Անի քաղաքից Կիև է գնում հայ ուազմիկների քանի հազարանոց մի խումբ պղուցիների դեմ մղվող պատրազմին մասնակցելու համար: Հետագայում հայ ուազմիկների մեծ մասը բնակություն է հաստատու Կիևում: Հայ ճարտարապետությունը և Ակարչությունը իրենց

արտացոլումն են գտել Սոֆիայի տաճարի, Միհայելովյան ոսկեմբեր վանքի և Կիևի հին ճարտարապետական այլ կողողների վրա:

Լվով քաղաքի պատմությունը սերտորեն կապված է նրա հայկական գաղործի հետ, որն ստեղծվելով միշտադարում, հակայական է դեռ և խաղացել քաղաքի բարզավաճաման գործում: Այստեղ կառուցվել են եկեղեցիներ, բնակելի տներ ու այլ շինություններ, որոնք այժմ էլ կազմում են քաղաքի տեսարժան վայրերից մեկը: Լվովի հեղաշական հետափառ ժողով Սկանդակովը ստեղծել է հեղարկերի «Հայկական շարք», որն ընդունվել է 60-ից ավելի աշխատաքըներ: Դրանք անցյալ տարի ցուցադրվեցին Երևանում կազմակերպված ցուցահանդեսում: Հայաշատ համայնքներ կային Կամենեց-Պոդլուկով, Լուցկում, Յազլուկեցում, Ստացիալվում (այժմյան Խվանով-Ֆրանկով), Լիսեցում, Տրուսենիցայում, Գորոդենկայում, Օքերտինում, Կուտում և այլ քաղաքներում ու բնակավայրերում: Ճարտարապետական կառուցվածքների մեջ հիմնականը այստեղ եկեղեցիներ են, որոնք կառուցվել են ամենուրեք, որտեղ ապրել է հայ բնակչությունը:

Դրիմի հայկական գաղթօջախների քաղաքական և մշակութային ամենախոշոր կենտրոններից է Եղել Կաֆա (այժմյան Թեղոսիա) քաղաքը, որը ունեցել է 45 հայկական եկեղեցներ: Պատերազմների հետևանքով դրանց մի մասը հիմնահատակ կործանվել է, իսկ 21-ը հետագայում վեր են աձնվել թարարական մզկիթների: Պահպանվել և այժմ մնաց են համել Յ եկեղեցի: Դրանցից երկուսը՝ ս. Սարգսիս և ս. Հրեշտակապետացը, նորոգվել ու վերականգնվել են վերջին երկու տարում, իսկ 4-ը՝ ս. Հովհաննեսը, ս. Գրիգորը, ս. Ստեփանոսը և ս. Խաչ Վանքի համալիրը, Շերկայում գտնվում են վերանորոգման ընթացքի մեջ:

Մեր ընկերությունը փոխարձ կապի մեջ է գտնվում Ուկրաինայի համանուն ընկերության և գիտա-արտադրական այն արվեստանոցի հետ, որն օրադրում է հայկական հուշարձանների վերանորոգման ու պահպանման աշխատանքներով: Ուկրաինացի մեր բարեկամներին մասնագիտական անհրաժեշտ օգնություն ցույց տալու նպատակով ընկերության նախագիտությունը Թեղոսիա գործուղեց պատմական գիտությունների դոկտոր Աս. Մնացականյանին, ճարտարապետ Յուրի Թամանյանին, տեխնիկական գիտությունների թեկնածու Գ. Սրգումանյանին, արվեստագիտության թեկնածու Է. Կորիսմազյանին, պատմական գի-

տությունների թեկնածու Գր. Գրիգորյանին, և լուսանկարիչ Ա. Վրուբելին: Նրանք խորհրդակցեցին ուկրաինացի մասնագետների հետ, մոքեր փոխանակեցին և որոշեցին հուշարձանների վերականգնման հետ կապված պրակտիկ մի շարք հարցեր:

Ավարտվել են և Սարգսի եկեղեցու վերանորոգման, տերիտորիայի բարեկարգման և կանաչապատման աշխատանքները: Այժմ այն դարձել է յուրահատուկ ուսուտանդիլ:

Այս եկեղեցու բակում է համազում աշխարհանչական ծովանեկարիչ Հովհաննես Սյվազովսկու մարմինը: Ամեն օր հազարավոր մարդիկ են այցելուս համարեղ նկարչի մարմարակերտ շիրմաքարին, որը փորագրված է իրեն խիստ բնորոշ մի թևավոր արտահայտություն: «Մարկանացու ծննդապահության լիշտակ զիրու եթողի»: Ընկերությունը նպատակահարմար է գտել հենց այս եկեղեցու շենքը դարձնել հայկական քարեղարան (լապհիարին)՝ այրուել ի մի հավաքելով քաղաքի տարրեր վայրերում սփռված հայկական մեմորիալ կոթողները, որոնց շուրջ 120 արձանագրություններից հետաքանի Գր. Գրիգորյանի ջանքերով քարոզմանվել են ուսերեն և ցուցադրյում են առանձին սրահում: Քարեղարանում պահպանվում են նաև մարմարակերտ այն յոթ մուշատահատակները, որոնք վերաբերում են Հովհաննես Սյվազովսկու տոմինագրությանը ու շինարարական գործունեությանը: Հայալեզու այս քարեղարանը առաջին է Անի համբառհանչական քարեղարանից հետո:

Դրիմահարց հոգևոր կենտրոնը դարեր շարունակ եղել է ս. Խաչ Վանքը, որը հիմնացվել է 1858 թվականին: Նա միաժամանակ հանդիսացել է մշակութի և դպրության կենտրոն: Այստեղ անհոնչ վարպետները գրադարձել են գիտության տարրեր ճյուղերով, արտագրել են ձեռագիրեր, ուսուցանել են բազմաթիվ աշակերտների և այլն: Հիասքանչ է վանքի դիրքը, այն գտնվում է անտառապատ սարալանջի վրա, ունի քաղցրահամ, սառնորակ ջրեր և հանդիսանում է Ղրիմի ամենագեղատեսվող անկյուններից մեկը: Ամեն օր այս չքնաղ բնության հմայքն են վայելում հարյուրավոր գրուստիկներ՝ հարգանքի տուրք մատուցելով մեր պահուստ հայրերի ստեղծագործ համարին... Ղրիմի գաղթօջախի հայաշատ կենտրոններից են Եղել նաև Ղարաբու (այժմյան Բեղոգրուսկ) քաղաքը, Սուրիաթը (այժմյան Միմֆերոպոլը), Արմյանսկը, Եվպատորիան, Բախչիսարայը և այլն: Հայրենիքից հետո ստեղծելով իրենց գաղթօջախները, հայերը երկար ժամանակ պահպանել են մայրենի լեզուն, գրականությունը, ավանդությունը և արվեստը: Նրանք զար-

գացրել են սեփական մշակութքը, զբաղվել շինարարական արվեստով և հոգևոր հարուստ ժառանգություն թողել սերունդներին:

Ուշագրավ են Լենինգրադի և Սովորական հայկական ճարտարապետական կոլոռները: Աշխատավորների դեպուտատների Լենինգրադի քաղաքային սովորի գործադիր կոմիտեն, հաչվի առնելով մեր խնդրանքը, որոշեց վերանորոգել Նևսկի պողոտայի վրա գտնվող հայկական եկեղեցին, և այժմ այն հանձնվել է քաղաքի գեղարվեստական ֆոնդին՝ գրաֆիկայի և կիրառական արվեստի մշտական գործող ցուցահանդես բացելու համար:

Մեր ընկերության նախաձեռնությամբ Երեվանում բացվել է Սովորական և Լենինգրադի հայկական ճարտարապետական հուշարձանների լուսանկարների ցուցահանդես:

Այցելուները մեծ հետաքրքրությամբ դիտեցին ցուցադրված 120-ից ավելի լավաշակի լուսանկարները, որոնցում պատկերված են 1814 թվականի մայիսի 25-ին Սովորական կառուցված Լազարյան ճեմարանի շենքը, 1815 թվականին Լազարյանց-ների միջոցներով Սովորական գերեզմանատանը կառուցված եկեղեցին, էմանուել Լազարյանցի, Մինի (Մինաս) և Հովհաննի լազարյանց եղբայրների, Լազարյան ճեմարանի սան, իսկ հետագայում նույն հաստատության արարական և պարսկական լեզուների պրոֆեսոր, «Հյուսիսակիալ» ամսագրի իրնբագիր Ստեփանոս Նազարյանի, ճեմարանի դիրեկտոր, բանաստեղծ Միքայ Շահագիզի, թորքական, թաթարական և պարսկական լեզուների պրոֆեսոր, մագիստրոս Լազար Լազարյանի, գիտնական ֆիզիոլոգ, ազգությամբ հայ, լուսական իշխան, ակադեմիկոս Հովհաննես Ռումանի թարիան Մատրավոյի (Թարիանով), անցյալ դարի 70-ական թվականներին լույս տեսառող «Փարոս» հանդեսի հրատարակիչներ հայրու որդի Զարմայը և Մեր Մետրյանների, ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցի և այլոց դամբարանաբարերը, Սովորական նորենացու պատմությունը առաջին անգամ ուսերենի թարգմանած, հայտնի գրականագետ, հրապարակախոս Մկրտիչ Էմինի, 1895 թվականին հրատարակված «Ռուսական եղբայրական օգնությունը Հայաստանին» մատենագրական հազվագյուտ գրքի հեղինակ Գրիգոր Զանշանի, Գնորդ Կանանովի (Քանանյան), ուսուցչապետականգապատ Կարապետ Կոստանդնուպոլիսի մահարձանները, որոնցից տրաքանչյուրը հայ ճարտարապետության մի գողտիկ ստեղծագործություն է:

Ուշագրավ են հայ ազնվական Աղայո

լորի Մելիքովի հուշարձանի, Ղարաբաղի հայ մելիքների հիշատակին նվիրված գեղարվանակ խաչքարի, ուսական բանակի գեղերալ հսայի Գասպարյանի, սովետական բանակի գեղերալ, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արամ Աղարիյանի և ուրիշների գերեզմանաբարերի լուսանկարները:

Լենինգրադի հայկական հուշարձաններից մեծ հետաքրքրություն են Երեկայացնում Նևսկի պողոտայի վրա կառուցված հայկական եկեղեցին, Վահակյան կղզու վրա գտնվող գերեզմանատունը, ինչպես նաև գեղերալ Վալերիան Մադարովի, աշխարհական գիտնականներ Լեվոն և Հովհանն Օրբելիների լուսանկարները, եղեռնի տարերածի առթիվ Պետրոգրադի դրամների պալատի թղթարկված հուշամեղալը՝ (1915 թ. «Մուսա առ հայ ի ժամու փորձանացաւ մակարությամբ»:

Հայկական հուշարձաններով հարուստ է նաև Ռուսություն մարզը, որոնց մեջ հասուն տեղ է գրավում ս. Խաչ վանքը, այն հիմնադրվել է 1783 թ. ուսանեցող թեմական առաջնորդ արքեպիսկոպոս Հովհանն Արդությանի կողմից: Վանքը ունեցել է իր դպրոցը, տապարանը և այլ օջախներ: Ս. Խաչի բակում են հանգչում Մ. Նալբանդյանի, Հ. Աղամդարյանի, Ռ. Պատկանյանի և ուրիշ անվանի հայողուների աճյունները:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին վանական արև համակառուցը մեծ շափով տուժեց՝ ընկնելով գերմանացիների ուրբակոծության տակ: Կանգուն մնաց միայն մեծ տաճարը, որ խիստ վնասված լինելու պատճառով քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն ենթակա էր քանդման: Մեր ընկերության նախագահության նախագահ, հանգուցայ Մարտիրոս Սարյանը բանակցությունների մեջ մտնելով Ռուսություն դեկավար օրգանների հետ, հրա եռանդագին շանքերով կանսվեց տաճարի քանդման վտանգը: Համբաւառության վաստակավոր ճարտարապետ Մարկ Գրիգորյանի ղեկավարությամբ մի խումբ մասնագետներ եղան Ռուսություն, նախագծեցին հուշարձանախմբի վերականգնման նախագիծը: Այժմ ս. Խաչը հիմնովին վերանորոգված է և վերածված Ռուսություն մարզային երկրագիտական բանգարանի հայկական մասնացուի:

Հայաշատ գաղթօջախներից է Կրասնոդարի երկրամասը: Արմավիր քաղաքը 1839 թվականին հիմնել են չերեզմահայերը, որոնց նախանձերը գնացել էին Ամինից և Շիրակից: Նրանք ժամանակին աշքի ընկնող դեր են կատարել երկրամասի տնտեսական ու մշակութային կյանքում: Քաղա-

թի հայկական երեք եկեղեցիներից պահպանվել և մեզ է հասել 1846 թ. կառուցված և Աստվածածին տաճարը: Մեր ընկերության հափառահության միջնորդությամբ այդ հուշարձանի վերանորոգումը մտցվել է շհարարական կազմակերպությունների 1973 թ. պլանի մեջ և այժմ վերանորոգվում է:

Այս տաճարը կառուցված է հայ միջնադարյան ճարտարապետության բնորոշ առանձնահատկություններով և անքակնելիութեան կապված է Արմավիր քաղաքի հիմնադրման պատմության հետ: Եկեղեցու բակում, մարմարակերտ շիրմաքարերի տակ, ամփոփված են առաջին չերքեական քահանա Վարդան Գասպարյանը ու ծերուանագարդ Կարապետ Արծիվյանը:

Հայկական պատմա-ճարտարապետական հուշարձաններ կան նաև Լեհաստանում, Ռուսիայում, Իրանում, Ավստրիայում և շատ այլ երկրներում:

Լեհաստանի Զամուտյե քաղաքում հայերը բնակություն են հաստատել 400 տարի առաջ և արժանացել լեհական իշխանությունների քարյացակամ վերաբերմունքին:

Այսուղեւ հաստատվում են ինչպես Դիմից ու լեհահայոց այլ կենտրոններից, այնպես էլ Թուրքիայի ու Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող վայրերից եկած հայ գաղթականներ:

1585 թվականի հրովարտակով ճորաստեղծ այդ քաղաքի բնակիչներին իրավունք է տրվում ազատորեն զբաղվելու զանազան արհեստներով ու առևտորով, ունենալու և եփական դատարան, որտեղ կիրավունք է հայոց դատաստանագիրը: Գաղութը դարձել էր հայ գրչության օջախներից մեկը և գոյություն է ունեցել ավելի քան 200 տարի:

Այսուղեւ գործել են գրիչներ Հակոբ Դայիր, Լուսիկ Սարկավագը, Նիկոլ Երեցը, Վարդերես Սատվածատորը, Մարութա Դըպիր Ամամիացին, Հովհաննեսը, Դավիթ Սարկավագը:

Այսուղեւ ծննվել է լեհահայ Եշանավոր ուղաքիր Սիմեոն Լեհացին: Այս գաղութը կարևոր դեր է խաղացել լեհաստանի և արևմելյան մի շարք երկրների մշակութային ու առևտորական կապերի ամրապնդման գործում:

Զամուտյեի հայկական թաղամասի ճարտարապետական գեղեցիկ շենքերը գրավել են լեհ արվեստագետների ուշադրությունը, որոնք խնամքով վերանորոգվում են իրքն քաղաքի ճարտարապետական կարևոր հուշարձաններ:

Վերջերս քաղաքի կենտրոնական թաղամասի հինավորց շենքերից մեկի պատշ-

գամբի գերաճի վրա, վերանորոգման աշխատանքների ժամանակ, հայտնաբերվելեց հայերն մի արձանագրություն, որը վերաբերում է շենքի շինարարությանը:

Ավելի քան 900 տարի առաջ Բագրատունացած Անդր մայրաքաղաքից գաղթական հայերի մի հատված բնակչություն հաստատեց Տրանսիլվանիայում ու հիմնեց հայկական Սրբանապղիս քաղաքը (այժմ Ռումինիայում), Կենապեր անվանումով): Նոր բնակվայրում ևս հայր կառուցեց իր հայուն եկեղեցին, բնակարանը, տնտեսական կառուցները, ստեղծեց իր հայկական կյանքը:

Հարուստ է քաղաքը ճարտարապետական հուշարձաններով, որոնք քաղաքին հաղորդում են ինքնատիպություն ու առանձնակի գեղեցկություն: Այնուամենայնիվ ժամանակն իր ավերիչ դերը, ինչպես նաև քաղաքաշինական նորագույն ձեռնարկումները իրենց կնիքն են դնում հնամենի կառուցների վրա:

Այնքան բուն ու տիրական էր Արմենիապղիսի կյանքը, որ օտարն իսկ առնչվում էր, ներձուվում դրան: Այդպիսին եղավ և բունգարացի ճարտարապետ Կարլոս Կոպանի համար, որ բնակություն հաստատելով այստեղ, ամուսնացավ հայունություն ունեցած հայ կյանքին: Նրա որդին՝ Հովհաննես Կոպանը (1910 թ. ծնված), բազմադիմանի կրթություն է ստացել: Եվ ահա նա իր ներկապնակով անհնտացումից փրկում է հայ ճարտարապետական կրթողները:

Անխոնց համառությամբ* նաև վերամարմագորում է դրանք, եզ առ եզ ատեղծում նորացող քաղաքի հնամենի հայկական պատկերը: Այդպես է ստեղծվել «Սամոշայի պատկերագրդ ալբոնը», որտեղից, ինչպես ուսմին արվեստագետ Դոմինիկ Գորպորն է ասում, «մեզ են նայում մին հայ տեղեր ու մին հայ դեմքեր, որոնք վկայում են, որ օտարի հողի վրա եւ, ավելի քան 900 տարի, քաջություն ունեցան հայ մեալու»:

Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև մղված պատերազմների հետևանքով 1804 թվականին տասնյակ հազարավոր հայեր քչվեցին Իրանի խորքերը: Անրունեցների սրտերում միշտ էլ անմար մնաց հայրենի երկրի կարոտը: Այդ անսահման կառուտը մեղմացնելու համար նրանք մի դեպքում էջմիածնից քարեր էին տեղափոխում Սպահան՝ իրենց նորակառուց վաճքի հիմքերին դնելու համար, այլ դեպքերում՝ ապահովում Իրանի սահմաններում գտնվող պատմական Հայաստանի հնագույն եկեղեցներին ու վաճքերին:

Բարեբախտաբար պահպանվել և մեր օրերն են հասել պատմա-ճարտարապետական մի շարք կառուցներ, վանքեր: Ներկայում իրանում կանգուն են մնացել հայկական երեք վանքեր՝ պատմական Սրոտազգավառի և Թաղեի վանքը (գտնվում է Մակուց ոչ հեռու) Հին Զուղայի մերձական Դարաշամբի և Ստեփանոս Նախավլիայի վանքը (Երկուսն էլ կառուցվել են 6—9-րդ դարերում), և Զուղայի գաղթից հետո հիմնադրված Սպահանի և Ամենափրկիչ վանքը: Այդ կոթողները հարուստ են վիմական խաչքարերի բազմաթիվ արձանագրություններով: Հատուկ արժեք են Աերկապանում, մանավանդ, Ակարիչ վարպետների թողած հիշատակությունները: Հարուստ ժառանգություն են թողել պատկերահաններ Հովհաննես Տիեզերալույսը, Մինասը, Տեր-Ստեփանոսը, Սիմոնը, Տեր-Կիրակոսը, Բարսեղը և որիշներ:

Պարսկահայ բանարվեստի հմտութեատագոտող Լուսն Մինասյանը մանրամասն տեղեկություններ է տալիս հիշյալ վանքերի տեղանքի, հիմնադրման պատմության, ճարտարապետական կառուցվածքի և նրանց արդի վիճակի մասին, վերջերս Թեհրանում հրատարակված «Իրանի հայկական վանքերը» աշխատության մեջ:

Ծաշակով ընտրված, գունավոր յոթամասուն լուսանկարները, հատակագծերը, գծագրությունները, ամբողջական, կենդանի պատկերացում են տալիս այդ խոշորագույն ճարտարապետական կառուցների մասին:

Միջնադարյան ճարտարապետական մտածողության հարազատ էր առարկան իրև տեսդական երևոյթ ըմբռնելը, իսկ ձևը գալիս էր մարմնացում տալու գնդագիտական ու հոգևոր ըմբռնումներին:

Ծարտարապետը իր մտահացումը արտահայտելու համար փոքրացած չափերով քանդակում էր կառուցվելիք կերպարը. Մանրակերտը շատ բնորոշ է եղել հայ ճարտարապետական մշակույթին:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Ռողական քաղաքում ապրում է արհեստով ատաղձագործ, ինքնուս ստեղծագործ Մանկական Բոյաչյանը, որն իր ամրող ազատ ժամանակը նվիրում է հայ ճարտարապետական կարևոր հուշարձանների մանրակերտերի հորինումնին: Նա օրերով և շաբաթներով տաշում և հղկում է մարմարի բեկրները, նրանց տալիս ձև ու ոճ և կերտում ու. Հոկիսիմեի տաճարը, Զվարթնոցի և այլ տաճարների մանրակերտը:

Ո. Հոկիսիմեի տաճարի մանրակերտը պատրաստելու համար նա ուսկերչի հմտությամբ հղկել է 7000, իսկ Զվարթնոցինը՝ 5000 մարմարի բեկրներ:

Ամենուրեք, ուր ապրել է հայը, կարելի է տեսնել հազարամյակների կնիքը կրող ճարտարապետական սքանչելի կոթողներ ու անամրներ, ամրոցներ ու բերդեր, խաչքարեր:

Ինչպես մեր հանրապետության տերիուրիայում, այնպես էլ նրա սահմաններից հեռու գտնվող հուշարձանները իրենց պատմական, ճարտարապետական ու գեղարվեստական արժանիքների շնորհիվ վաղուց են արժանացել քաղաքակիրթ աշխարհի նաև ամրանաց ու բարձր գնահատականին:

Պատմա-ճարտարապետական բոլոր կոթողները, ո՞ր էլ որ նրանք գտնվեն, մեր հոգեվոր հարստությունն են, պետք է մշտապես գտնվեն ուշադրության կենտրոնում և պահպանվեն վայելու վիճակում:

